# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/382 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 14 | ՉԺՀ | Չափերը պետք է լինեն առնվազն 2418 × 5022 × 2972 մմ Արտադրության համար օգտագործվող նյութերը պետք է լինեն Փշատերև ծառատեսակների փայտ (խեժափիճի) – օգտագործվում է հենասյուների և կառուցվածքի այլ փայտե տարրերի պատրաստման համար: Խեժափիճին պետք է ընտրված լինի իր բարձր ամրության, փտման և խոնավության նկատմամբ դիմադրողականության, ինչպես նաև գեղագիտական տեսքի շնորհիվ: Չժանգոտվող պողպատ – պետք է օգտագործվ ամրացման տարրերի, կախոցի շղթաների և այլ մետաղական մասերի պատրաստման համար: Ապահովում է կառուցվածքի երկարակեցությունը և կոռոզիայի նկատմամբ դիմադրությունը: Ռետին – պետք է օգտագործվի նստատեղերի պատրաստման համար: Ապահովում է օգտագործման հարմարավետություն և բարձր մաշակայունություն: Պլաստիկ – պետք է օգտագործվի խցանների պատրաստման համար, որոնք փակում են պտուտակային միացումների դուրս եկող մասերը և խողովակների բաց ծայրերը: Պետք է ապահովի լրացուցիչ անվտանգություն և երկարացնի կառուցվածքի ծառայության ժամկետը: Մատակարարման հավաքածուի մեջ պետք է ներառված լինեն՝ 8. շրջանակ՝ 1 հատ 9. ռետինե նստատեղ՝ 2 հատ 10. ռետինե կախոց՝ 2 հատ 11. կարճ օղակներով չժանգոտվող պողպատե կախոցի շղթա՝ 2 հատ (յուրաքանչյուր շղթայի երկարությունը՝ առնվազն 1.5 մ, օղակի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տրամագիծը՝ առնվազն 8 մմ) 12. չժանգոտվող պողպատից ամրակների հավաքածու (պտուտակներ, ընկույզներ, լվացափոշիներ)՝ 1 հավաքածու 13. պլաստիկ խցանների հավաքածու (խողովակների բաց ծայրերի և դուրս եկող պտուտակային միացումների փակման համար) 14. ջերմանեղվող խողովակների հավաքածու (շղթաների ծայրերի պաշտպանության համար)։ Ճոճանակը պետք է ունենա ամուր և կայուն կառուցվածք, որը պետք է բաղկացած լինի հետևյալ տարրերից. Հենասյուներ (4 հատ) 1. պատրաստված են խեժափիճու գլանաձև մշակված գերանից, 2. յուրաքանչյուր սյան տրամագիծը՝ առնվազն 140 մմ, 3. յուրաքանչյուր սյան երկարությունը՝ առնվազն 2.8 մ (հողի մեջ տեղադրման առաջարկվող խորությունը՝ առնվազն 0.8 մ), 4. տեղադրված են առնվազն 2 × 3 մ չափերով ուղղանկյուն հարթակի անկյուններում։ Նստատեղեր (2 հատ) 1. պատրաստված են ամուր, մաշակայուն ռետինից, 2. յուրաքանչյուր նստատեղի չափերը՝ առնվազն 500 × 300 × 20 մմ, 3. ամրացվում են շրջանակին ռետինե կախոցների և կարճ օղակներով չժանգոտվող պողպատե շղթաների միջոցով։ Կախոցներ (2 հատ) 1. ռետինե, 2. ապահովում են հարվածամեղմում և ճոճվելու ընթացքում նվազեցնում աղմուկի մակարդակը, 3. հուսալիորեն ամրացնում են նստատեղերը շղթաների վրա։ Կախոցի շղթաներ (2 հատ) 1. պատրաստված են չժանգոտվող պողպատից, 2. ծայրերին ունեն ջերմանեղվող խողովակներ, որոնք պաշտպանում են վնասվածքներից և ապահովում օգտագործողների անվտանգությունը։ Ամրացման տարրեր 10. չժանգոտվող պողպատից պտուտակներ, ընկույզներ և լվացափոշիներ, որոնք ապահովում են կառուցվածքի բոլոր տարրերի հուսալի միացումը, 11. պտուտակային միացումների դուրս եկող մասերը փակված են պլաստիկ խցաններով՝ վնասվածքները կանխելու և կոռոզիայից պաշտպանելու նպատակով։ Ճոճանակի բոլոր տարրերն ունեն պաշտպանիչ ծածկույթ, որը երկարացնում է դրանց ծառայության ժամկետը և բարելավում արտաքին տեսքը։ Մետաղական տարրեր (շրջանակ, շղթաներ, ամրակներ) 13. նախապես մշակվում են փոշեներկային ցինկային նախաներկով՝ կոռոզիայից պաշտպանելու համար, 14. պատվում են մթնոլորտային տեղումների, ուլտրամանուշակագույն ճառագայթման և մեխանիկական վնասվածքների նկատմամբ դիմացկուն փոշեներկով։ Փայտե տարրեր (հենասյուներ) 20. նախապատվում են լեսսիրացնող նախաներկով, որը ընդգծում է փայտի բնական կառուցվածքը և պաշտպանում այն փտումից, 21. պատվում են ջրադիսպերսիոն լաքով, որը ստեղծում է ամուր, մաշակայուն ծածկույթ և պաշտպանում խոնավությունից ու ուլտրամանուշակագույն ճառագայթումից։ Տեխնիկական |

| | | |
|---|---|---|
| | | բնութագրեր 20. Մեկ նստատեղի առավելագույն թույլատրելի ծանրաբեռնվածությունը՝ առնվազն 120 կգ։ 21. Ճոճանակի ընդհանուր առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ առնվազն 240 կգ։ 22. Գաբարիտային չափերը առնվազն (Ե × L × Բ)՝ 3000 × 2000 × 2200 մմ։ 23. Կառուցվածքի քաշը՝ առնվազն 85 կգ։ 24. Տեղադրման համար առաջարկվող մակերեսը՝ առնվազն 4 × 3 մ։ 25. Շահագործման ջերմաստիճանային միջակայքը՝ −40°C-ից մինչև +60°C։ Տեղադրման պահանջներ ● Հենասյուները տեղադրել նախապես պատրաստված փոսերում՝ առնվազն 0.8 մ խորությամբ։ ● Սյուները ուղղահայաց հավասարեցնել և ամրացնել փոսերում բետոնե խառնուրդի միջոցով։ ● Բետոնի ամբողջական կարծրացումից հետո (առնվազն 72 ժամ) տեղադրել և ամրացնել շրջանակը։ ● Տեղադրել կախոցի շղթաները և ռետինե կախոցները։ ● Ամրացնել նստատեղերը կախոցներին։ ● Ստուգել բոլոր միացումների հուսալիությունը և համոզվել, որ բացակայում են լյուֆտերը։ Տրվում է մեկ տարվա՝ 365 օր, երաշխիք։ Ապրանքի փոխադրումը և տեղադրումը մինչև Գնորդի պահեստային տնտեսություն՝ համապատասխան փաթեթավորմամբ, մինչև տեղադրման վայր՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, ըստ Գնորդի նշած հասցեի, կատարում է վաճառողը։ Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով։ Գնորդի կողմից պահանջի դեպքում վաճառողը պետք է ներկայացնի անվտանգության և համապատասխանության հավաստագրերը։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ВАНЕСА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЪЭ-ЕЦДЦПЭФ-26/382 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 14 | | |